ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 17 » փետրվարի 2022թ.

№ ԱՍ/34.3-Մ2-12/513-2022

«ԱՅՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի
տնօրեն Ա. Դավթյանին

Հարգելի պարոն Դավթյան,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 16-ի «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Այսոլար» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0668 լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին» №68-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 3 էջ:

2/17/2022

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Մ. Ղարիբյան ☎ 52-85-33 (336)

600.0068.16.02.22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2022 թվականի №68-Ա
ք. Երևան

«ԱՅՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՅՍՈԼԱՐ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0668 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի մարտի 25-ի №83Ա որոշմամբ «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Այսոլար» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0668 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0668 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2020 թվականի նոյեմբերի 26-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ) ինչը, սակայն, չի կատարվել, ի հետևանք որի՝ նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2021 թվականի հուլիսի 26-ը,

բ) Ընկերությունը մինչև 2021 թվականի հուլիսի 26-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ինչը փաստվել է Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 25-ի №310Ա որոշմամբ և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, Նախագծի՝ Հանձնաժողով ներկայացման ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված

մինչև 2021 թվականի դեկտեմբերի 10-ը, մինչդեռ Ընկերությունը նշված ժամկետում ևս չի ներկայացրել այն,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 16-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ԼԷ №0668 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2021 թվականի դեկտեմբերի 16-ի №ԳԲ/34.3-Մ2-12/4312-2021 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի առնչությամբ փաստարկներ և հիմնավորումներ չի ներկայացրել,

ե) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ հետևյալ պայմաններով.

1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ առանց որևէ վարչական և ֆինանսական պատասխանատվության.

2) 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

3) նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է:

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0668 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 10-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼԷ №0668 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 10-ը, Նախագիծը

Հանձնաժողով չներկայացնելու հիմքով կասեցնել Ընկերության ԼԷ №0668 լիցենզիայի գործողությունը՝ մինչև կասեցման պատճառի վերացումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
16 փետրվարի 2022թ.

ՀՀ, ...յին ծառայությունները
...որող հանձնաժողով
... Երևան Սայյան 22

Ետ վերադարձ/ RETURN CN 15

☐ Անհայտ/ Unknown ☐ Մերժված/ Refused

☐ Տեղափոխված/ Gone away ☐ Չպահանջված/ Unclaimed

☐ Թերի հասցե/ Insufficient address ☐ Այլ/Other

Ետ վերադարձման ամսաթիվը/ Return date 07.03.22թ [signature]

3805 07 MAR 2022 HayPost

DLEO102351247AM

[illegible]
..., 20 կ., 1
«...» ՍՊԸ

ՄԴ/34.3-Ն2-12/513-2022

ARMENIA VAYOTS DZOR
2 9 MAR [illegible]

11 MAR 2022
0002

ARMENIA ZARITAP
3805
21 FEB 202[illegible]
HayPost

ARMENIA
1 9 FEB [illegible]

ՄԱ/34.3-Մ2-12/513-2022

CN 07

ADVICE of receipt/of delivery/of payment/of entry
ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման

Տրման փոստային ադմինիստրացիա / Postal administration of origin

Ծառայողական / On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիք / Stamp of the office returning the advice

A.R.

Ընդունման գրասենյակ / Office of posting	Ամսաթիվ / Date
Առաքանու հասցեատեր / Addressee of the item	[illegible handwriting]

Առաքանու բնույթը / Nature of the item

- Առաջնային / Priority — Նամակ / Letter
- Ոչ առաջնային / Non-Priority — Դրոշմագրական / Printed paper
- Ծանրոց / Parcel
- Պատվիրված / Registered
- Վկայագրված հանձնում / Recorded delivery
- Գնահատված / Insured — Գումար / Amount
- Առաքանու թիվը / No of item
- Հասարակ դրամական փոխադրություն / Ordinary money order — Գումար / Amount
- Օրինագծման կտրոն / Inpayment money order
- Վճարման հանձնարարականի կտրոն / Outpayment cheque

Լրացվում է նշանակման վայրում / To be completed at the point of destination

The item ... has been ...

... է ընթացիկ ... հաշվին / ... giro account

... delivered

Լրացվում է ուղարկողի կողմից / To befilld in by the sender

Առաջնային / Priority
Օդային / By airmail

Վերադարձնել / Return to

Անուն կամ գրասենյակի անվանում / Name	
Փողոց և թիվ / Street and No	
Բնակավայր և երկիր / Locality and country	

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀ ք. Երևան Սարյան 22

ADLE0102351247AM

0002
11 MAR 2022